«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն է լինելու գիտական առարկայականութիւնն ու ճշմարտութիւնը, միայն ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը՝ համոզած, որ անգամ ամենադառն ճշմարտութիւնը աւելի օգտակար է, քան ոսկեզօծ ու շաքարապատ սուտը»։

Սիմոն Վրացեան

Խմբագիր՝ ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վլադիմիր Բարխուդարյան

Սերգեյ Սարինյան

Աշոտ Մելքոնյան
Ռուբեն Սաֆրաստյան
Ալբերտ Ստեփանյան
Սուրեն Դանիելյան
Համլետ Պետրոսյան
Սամվել Միւրադյան
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌՔ

Երվանդ Փամբուկյան – Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան – Լիբանան
Հարություն Քյուրքչյան – Հունաստան
Կարո Արմենյան – ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան – ԱՄՆ
Վաչե Բրուտյան – ԱՄՆ

համահայկական հանդես
Թ (ԺԵ) տարի, 2017,
թիվ 4 (60), հոկտեմբեր–դեկտեմբեր

«Վէմ» համահայկական հանդես
Հրատարակիչ՝ **«Վէմ հանդէս» ՍՊԸ**

0010 Երևան, Միհեր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ **52 18 76, 093 83 93 24**

Էլ. փոստ՝ **khoudinyan@yahoo.com**

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

ISSN 1829 – 1864

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Ո՞Վ Է ՀԱՅԸ 3

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ
Դավիթ Ռ. Մոսինյան
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ 10

Ելենա Հ. Էթարյան
ՄԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 18

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Գեղամ Մ. Բաղալյան
ՏԱՅՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ XVI Դ. ՎԵՐՋԻՆ
Ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակի» 40

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
Ալբերտ Ա. Ստեփանյան
ԱՐԵՎՄՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅՔՈՒՄ
Պատմություն և պատմական գրույթ (անգլերեն) 71

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Ալբերտ Ա. Մակարյան
Աստղիկ Վ. Սողոյան
ՀԱՆՐԱՀԱՅՏ ՄԻ ՀԵՔԻԱԹԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ
Շառլ Պերրո, Գրիմ եղբայրներ, Հակոբ Պարոնյան 123

Սարինե Դ. Ղազարյան
ԳԵՆԴԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
Հակոբ Օշականի «Խոնարհները» ժողովածուում 140

Խաչիկ Ա. Հարությունյան
ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՍԿՍՅԱԼ, ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ
Նորահայտ բառեր Ժ–ԺԲ դարերի հիշատակարաններից 157

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Նարեկ Ա.Մկրտչյան
ԹՈՒՐՔԻԶՄԻ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ 175

ՄՇԱԿՈՒՅԹ
Ռոբեն Ս. Անգալադյան
ՆԱ, ՈՐ ՕՐՀՆՈՒՄ ԷՐ ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
Արա Շիրազի ցուցահանդեսի առիթով 191

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ
Աշոտ Ն. Հայրունի
ԿԱՐԵՆ ՅԵՊՊԵԻ ՓՐԿԱՐԱՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ: ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՅՔ
Մաս առաջին: Մեծ մարդասերի գործունեությունը Ուռհայում 199

Արարատ Մ. Հակոբյան
Ա. ՄԻԿՈՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ–ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 217

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
Ռուսլան Ա. Յականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԱՆԿՄԱՆ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԵՎ ՄԵԲԵՈՍԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ 230

Հովհաննես Գ. Խորիկյան
ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 240

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ– Պետականության մարտահրավերը
Մաս երկրորդ
Արմեն Ա. Ասրյան
ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԵՐՏ ԳՈՐԾՈՆ 249

Մաս երրորդ
Արամ Ս. Սայիյան
ԴԵՐՍԻՄԸ 1920 Թ. ԹՈՒՐՔ – ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ
Քոչգիրիի ապստամբության դասերը 266

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Տիգրան Ս. Սիմյան – Ժենյա Քալանթարյան: Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն:
Ուսումնական ձեռնարկ 278

ԱՐԽԻՎ
Արամ Ա. Անտոնեան
ՆԻՒԹԵՐ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Ռէս– Իլ–Այնի կոտորածները
Հրատարակութեան պատրաստեց և առաջաբանն ու ծանոթագրութիւնները գրեց՝ Միհրան Ա. Մինասեան 285

ՀԱՎԵԼՎԱԾ
Վարդան Գ. Դևրիկյան
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՄՇՏԱՆՈՐՈԳ ԼՈՒՅՍԸ
Մխիթարյան միաբանության՝ Վենետիկում հաստատվելու 300–ամյակի առթիվ I (297)

CONTENT 317

СОДЕРЖАНИЕ 318

«ՎԷՄ»–Ի 2017 Թ. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ 319

ԾԱՆՈՒՅՑՈՒՄ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ 325

Հովհաննես Գ. Խորիկյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԲԱԲԵԼՈՆԱԿԱՆ ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Բանալի բառեր – Հերոդոտոս, Քսենոփոն, Բաբելոն քաղաք, Բաբելոնիա, Դարեհ Ա., սատրապություն, քաղաքականություն, Ասորեստան, տեղեկություններ, Միջագետք, «մնացյալ Ասորեստան», Բեհիսթունի արձանագրություն:

Մ. թ. ա. 545–539 թվականներին՝ արևելաիրանական և միջինասիական տարածքների նվաճումից հետո, պարսիկներն անմիջապես ձեռնամուխ են լինում Բաբելոնիայի գրավմանը: Համաձայն Քսենոփոնի՝ մ. թ. ա. 539 թվականին ասորեստանցիներին և բաբելոնացիներին նվաճում է Կյուրոս Բ-ն[1], որը նույնանում է Դիոդորոս Սիկիլիացու Նինոսին[2]: Ընդ որում, «Կյուրոպեդիա»-ում Կյուրոսի կողմից Ասորեստանի նվաճումը որոշակիորեն համապատասխանում է Հերոդոտոսի «Բաբելոնիայի լոգոսին»՝ պատմությանը[3]:

Սեպագիր և անտիկ աղբյուրները Բաբելոնի նվաճման վերաբերյալ հիմնականում տալիս են միանման տեղեկություններ: Այսպես, «Նաբոնիդի ժամանակագրության» մեջ խոսվում է այն մասին, որ Գուտիումի կառավարիչ[4] Ուգբարուն

*Հոդվածն ընդունվել է տպագրության 27.10. 2017:

1 Տես **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, թարգմ. **Ս. Կրկյաշարյանի**, Եր., 2000, էջ 5 [**Xenophon**, Cyropaedia, t'argm. S. Krkiasharyani, Yerevan, 2000, p. 5]:

2 Տես **Դիոդորոս Սիկիլիացի**, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985, էջ 16 [Diodoros Sikiliac'i, Patmakan gradaran, t'argm. bnagric', arajaban ev tsanot'agrut'yunner S. Krkiasharyani, Yerevan, 1985, p. 16]:

3 **Henkelman W. F. M., Kuhrt A., Rollinger R., Wiesehöfer J.,** Herodotus and Babylon Reconsidered, Classica et Orientalia, Band 3, Herausgegeben von **R. Bichler, B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing** und **J. Wiesehöfer**, Wiesbaden, 2011, pp. 449–470.

4 Գուտիումը նույնացվել է Մեդիա-Մարաստանի հետ (տես **Дандамаев М. А.,** Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э. Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 51 [**Dandamaev M. A**., Mesopotamiya i Iran v VII–IV vv. do n. e. Sotsial'niye instituti i ideologiya, Sankt-Peterburg, 2009, s. 51]): Մեր կարծիքով, դատելով «Անաբասիս»-ի այն տեղեկություններից, որ բուն ասորեստանյան տարածքները՝ Լարիսսան և Մասպիլան, ժողովրդի հիշողության մեջ մնացել էին մեդական տարածքներ (տես **Քսենոփոն**, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 74–75 [**Xenophon**, Anabasis, t'argm. **S. Krkiasharyani**, Yerevan, 1970, pp. 74–75]; **Jacobs B.**, Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius' III, Wiesbaden, 1994, S. 150), ուրեմն Գուտիումը կարելի է տեղադրել այս շրջանում կամ էլ, նկատի ունենալով Օպիսի ճակատամարտը, կարելի է եզրակացնել, որ Գուտիումը գտնվում էր Օպիսից արևելք (հմմտ. **Дандамаев М. А.**, Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 311 [**Dandamaev M. A.,** Mesopotamiya i Iran v VII–IV vv. do n. e., s. 311]; **Cook J. M**., The Rise of the Achaemenids and Establishment of their Empire, "The Cambridge History of Iran", Vol. 2, Cambridge

պարսիկների հետ միասին բաբելոնացիներին ջախջախում է Օպիսի մոտ, այնուհետև գրավում Սիպպարը: Կյուրոս Բ-ն մ. թ. ա. 539 թվականի հոկտեմբերի 29-ին առանց կռվի, մեծ հանդիսավորությամբ, Մարդուկ աստծու կարգադրությամբ[5] մտնում է Բաբելոն՝ իր իշխանությանը տալով անձնական ունիայի բնույթ[6]: Միայն մ. թ. ա. 481 թվականին դաժանորեն ճնշելով Բաբելոնի ապստամբությունը՝ Քսերքսեսը ոչնչացնում է նաև ձևականորեն գոյություն ունեցող Բաբելոնի թագավորությունը՝ այն վերածելով սովորական սատրապության[7]: Այս ընդարձակ սատրապության բաժանումը երկու սատրապությունների սովորաբար թվագրում են ապստամբության ճնշումից հետո[8], սակայն Անդրգետքի՝ Eber-nāri-ի առանձնացումը տեղի էր ունեցել Դարեհ Ա-ի ժամանակ:

Բաբելոնի գրավումը, անկասկած, նշանակում էր նաև Միջերկրածովքի արևելյան ափի հարուստ քաղաքների նկատմամբ գերիշխանության հաստատում, քանի որ դրանք գտնվում էին Բաբելոնի տնտեսական տիրույթում[9]: Բաբելոնի և ամբողջ Միջագետքի կառավարիչ է նշանակվում Ուգբարուն, որը երեք շաբաթ անց մահանում է: Ուգբարուից հետո արքայազն Կամբյուսեսը նշանակվում է Բաբելոնիայի թագավոր, սակայն նրա ձեռքում միայն Բաբելոն քաղաքն էր՝ երկրի հյուսիսային մասի հետ: Անհայտ պատճառներով Կամբյուսեսը թագավորում է ընդամենը 9 ամիս և մ. թ. ա. 537 թվականին հեռացվում է Բաբելոնի գահից: Մ. թ. ա. 535 թվականին Կյուրոսը ստեղծում է Միջագետքի և Եփրատից արևմուտք ընկած երկրների միացյալ սատրապությունը նիզակակիր Գաուբարուվա-Գուբարու-Գոբրյուասի[10] ղեկավարությամբ[11]: Մ. թ. ա. 520 թվականին այս ընդարձակ նահանգի սատրապ է նշանակվում

University Press, 1985, p. 212; **Briant P.,** From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, translated by P. T. Daniels, Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2002, p. 42): Ա. Օլմսթեդը գտնում էր, որ բաբելոնացիները Գուտիում էին անվանում Էլամը (տես **Olmstead A. T.,** History of the Persian Empire, Chicago, 1960, p. 45), Պ. Լեկոքը Գուտիումը լայն առումով տարածում է, այսպես կոչված, Իրանական Քրդստան կոչվող ժամանակակից տարածքի վրա (տես **Lecoq P**., Les Inscriptions de la Perse Achéménide, Paris, 1997, p. 182):

5 Տես **Дандамаев М. А**., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 51–52 [**Dandamaev M. A**., Mesopotamiya i Iran v VII–IV vv. do n. e., p. 51–52]; **Van der Spek R. J**., Cyrus the Great, Exiles, and Foreign Gods: A Comparison of Assyrian and Persian Policies on Subject Nations, in: Extraction & Control: Studies in Honor of Matthew W. Stolper, ed. by Michael Kozuh, Wouter F. M. Henkelman, **Charles E. Jones** and **Christopher Woods**, Studies in Ancient Oriental Civilization (SAOC), № 68, Chicago–Illinois, 2014, pp. 235, 261–263.

6 Տես **Дандамаев М. А.,** Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 38, 44 **[Dandamaev M. A.,** Politicheskaya istoriya Akhemenidskoy derzhavi, Moskva, 1985, p. 38, 44]; **Фрай Р**., Наследие Ирана, Москва, 1972, с. 119 [**Frai R.,** Nasledie Irana, Moskva, 1972, p. 119]; "Mesopotamian Chronicles", by J.–J. Glassner, Society of Biblical Literature, Atlanta, 2004, pp. 236, 238; **Briant P.**, From Cyrus to Alexander, pp. 41–42; **Mallowan M.**, Cyrus the Great (558–529 B. C.), "Iran", The British Institute of Persian Studies, Vol. X, 1972, p. 10; **Kuhrt A.,** The Cyrus Cylinder and Achaemenid Imperial Policy, "Journal for the Study of the Old Testament", 1983, Vol. 8, N 25, pp. 83–97.

7 Տես **Дандамаев М. А.,** Политическая история Ахеменидской державы, с. 137–138 [**Dandamaev M. A.,** Politicheskaya istoriya Akhemenidskoy derzhavi, p. 137–138]; **Kuhrt A.,** Achaemenid Babylonia: Sources and Problems, in: Achaemenid History, IV, Centre and Periphery, Leiden, 1990, p. 183; **Dandamaev M.,** Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations, in: Achaemenid History, VIII, Continuity and Change, ed. by **Heleen Sancisi–Weerdenburg**, **Amelie Kuhrt** & **Margaret Cool Root**, Leiden, 1994, p. 230.

8 Տես **Olmstead A. T**., History of the Persian Empire, p. 293; **Stolper M. W.,** Bēlšunu the Satrap, in: Language, Literature, and History: Philological and Historical Studies Presented to Erica Reiner, ed. by **F. Rochberg-Halton**, American Oriental Society, New Haven, Connecticut, 1987, p. 396.

9 Տես **Mallowan M.,** Cyrus the Great (558–529 B. C.), p. 9.

10 Տես **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, էջ 170, 172, 179, 181–194 և այլն [**Xenophon**, Cyropaedia, p. 170, 172, 179, 181–194 ev ailn]:

11 Տես **Дандамаев М. А.,** Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 54, 72, 77 [**Dandamaev M. A**., Mesopotamiya i Iran v VII–IV vv. do n. e., p. 54, 72, 77]; **Дандамаев М. А., Луконин В. Г**., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 111 [**Dandamaev M. A**., **Lukonin V. G.**, Kul'tura i ekonomika drevnego Irana, Moskva, 1980, s. 111]; **Kent R.**, Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 130; **Olmstead A. T**., History of the Persian Empire, p. 56; **Dandamayev M**., Iranians in Achaemenid Babylonia, Columbia Lectures on Iranian Studies 6, Costa Mesa, New York, 1992, p. 3.

պարսիկ Ուշտանուն[12], սակայն շուտով Դարեհ Ա–ն սատրապությունը բաժանում է երկու մասի. Բաբելոնիայի սատրապ՝ bēl pehāti է նշանակվում Ուշտանուն[13], իսկ Անդրգետքի սատրապ՝ Թաթնայը, որը վարչական առումով ենթարկվում էր Ուշտանուին[14]: Միջագետքի գրավումից հետո Աքեմենյան թագավորական ընտանիքը և պարսից ազնվականությունը տիրանում են ընդարձակ կալվածքների՝ ստանալով վիթխարի եկամուտներ: Միջագետքում ընդարձակ կալվածքներ ուներ, օրինակ, Եգիպտոսի սատրապ Արշամեսը[15]:

Հույն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով բաբելոնական սատրապությանը, գրում է. «Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից ստացվում էին հազար տաղանդ (հարկ – Հ. Խ.) և հինգ հարյուր ներքինիացված տղաներ. սա իններորդ նահանգն էր»[16]: Այս գերհարուստ սատրապությունը[17] Քսերքսեսի՝ Հելլադա արշավող բանակին տրամադրել էր զորամասեր. «Արշավին մասնակցող ասորեստանցիները իրենց գլխին կրում էին պղնձե սաղավարտներ, անհասկանալի և անբացատրելի կերպով հյուսված: Նրանց վահանները, նիզակները և դաշույնները նման էին եգիպտականներին: Բացի այդ՝ նրանք ունեին երկաթե ելունդներով փայտե դագանակներ: Հելլենները սրանց կոչում էին սյուրիացիներ, իսկ բարբարոսները՝ ասորեստանցիներ: Դրանց մեջ էին նաև խալդայները: Սրանց առաջնորդում էր Օտասպեսը՝ Արտաքայեսի որդին»[18]: Առաջին տեղեկությունից պարզվում է, որ IX սատրապությունը կազմված էր վարչական երկու ենթաշրջաններից՝ Բաբելոն քաղաքն իր շրջակայքով և դեպի հյուսիս ընկած Ասորեստանի մի մասով: Այլ կերպ ասած՝ Աքեմենյան Պարսկաստանի այս նահանգը հիմնականում ընդգրկում էր Ստորին Միջագետքը՝ Բաբելոնիայի մարզը[19], և հին Աշշուրի տարածքը: Ընդ որում, Ասորեստանի հյուսիսարևմտյան ընդարձակ մի հատվածը մտնում էր հայկական սատրապության կազմի մեջ[20]:

Հերոդոտոսի երկրորդ տեղեկության մեջ բաբելոնացիներն անվանական չեն հիշատակվում, սակայն ասորեստանցիների և խալդայների կամ քաղդեացիների հիշատակումը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերում է IX սատրապությունից հավաքագրված զորամասերին: Հերոդոտոսն իր մյուս տեղեկություններում Եփրատի ափին գտնվող Բաբելոնը համարում է Ասորեստանի, այսինքն՝ Նոր Բաբելոնական թագավորության[21] ամենահայտնի քաղաքը՝ գունեղ ներկայացնելով քաղաքի ամրությունները

---

12 Տես **Rainey A. F.,** The Satrapy "Beyond the River", "Australian Journal of Biblical Archaeology", 1969, № 1/2, pp. 53, 56; **Stolper M. W**., The Governor of Babylon and Across–the–River in 486 B. C., "Journal of Near Eastern Studies", Vol. 48, № 4, 1989, p. 289. Այս միացյալ սատրապության կամ Բաբելոնի և Անդրգետքի սատրապների ցանկը տես **Stolper M.** W., The Governor of Babylon and Across–the–River in 486 B. C., pp. 290–303; **Oppenheim A.,** The Babylonian Evidence of Achaemenian Rule in Mesopotamia, "The Cambridge History of Iran", Vol. 2, Cambridge University Press, 1985, pp. 563–565.

13 Տես **Dandamaev M.,** Achaemenid Mesopotamia..., p. 230.

14 Տես **Дандамаев М. А**., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 54 [**Dandamaev M. A**., Mesopotamiya i Iran v VII–IV vv. do n. e., p. 54]; նույնի՝ Политическая история Ахеменидской державы, с. 138 [nuini՝ Politicheskaya istoriya Akhemenidskoy derzhavi, p. 138]; նույնի՝ Iranians in Achaemenid Babylonia, p. 4.

15 Տես **Kuhrt A.,** Achaemenid Babylonia, p. 185.

16 **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Եր., 1986, III, 92 [**Herodotos**, Patmut'yun iny grqic', targmanut'yuny S. Krkiasharyani (aysuhetev՝ **Herodotos**), Yerevan, 1986, III, 92]:

17 Տես **Jursa M**., Taxation and Service Obligations in Babylonia from Nebuchadnezzar to Darius and the Evidence for Darius' Tax Reform, Classica et Orientalia, Band 3, Herausgegeben von R. Bichler, **B. Jacobs, G. B. Lanfranchi, R. Rollinger, K. Ruffing** und **J. Wiesehöfer**, Wiesbaden, 2011, pp. 431–448.

18 **Հերոդոտոս**, VII, 63 [Herodotos, VII, 63]; Herodotus, with an English translation by A. D. Godley, Vol. III, Books V–VII, Cambridge–Massachusetts–London, 1938, Loeb Classical Library, VII, 63, p. 378.

19 Տես **Հերոդոտոս**, I, 106 [**Herodotos**, I, 106]:

20 Տես **Խորիկյան Հ**., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Եր., 2014, էջ 37 և հաջ. [**Khorikyan H**., Hayastany ev Aisrkovkasy Ak'emenyan Parskastani varchakan bazhanumnerum (patmaashkharhagrakan usumnasirut'yun), Yerevan, 2014, p. 37 ev haj.]:

21 Տես **Jacobs B**.,Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius'III, S. 148.

և հիշատակելով քաղաքի՝ Շամիրամի, Նինոսյան, Քաղդեական, Բելյան, Կիսսիյան դարպասները[22]: Հերոդոտոսը Բաբելոնը համարում է չափազանց հարուստ քաղաք և պատմիչի տեղեկություններից պարզվում է, որ բացի IX սատրապության համար ամրագրված հազար տաղանդ՝ 30 տոննա արծաթ հարկից և հինգ հարյուր ներքինիացված տղաներից, այս սատրապությունը պարտավորվում էր տարվա չորս ամիսներին պահել արքային և նրա զորքերը, իսկ Բաբելոնի սատրապը համարվում էր ամենահարուստը և հզորը[23]:

Հերոդոտոսի տեղեկությունները թույլ են տալիս որոշակիորեն հստակեցնել նաև IX սատրապության սահմանները: Այսպես, պատմիչի տեղեկություններից կարելի է ենթադրել, որ Նինվեն կամ Նինոսն այս սատրապության հյուսիսային մասում էր գտնվում, Իս քաղաքը՝ «հում բիտում. ասֆալտ» նշանակությամբ, նույնանում է շումերական Իդին կամ Իդուին, աքքադերեն Իտտուին, արաբական Հիթին և գտնվում էր Բաբելոնից հյուսիս-արևմուտք՝ ութ օրվա ճանապարհի կամ 180 կմ[24] հեռավորության վրա, իսկ Օպիս քաղաքը՝ սատրապության արևելյան մասում[25]:

IX սատրապության տարածքի հստակեցման համար կարևոր նշանակություն ունեն Քսենոփոնի «Անաբասիս»-ում հիշատակվող տեղեկությունները: Համաձայն պատմիչի՝ Սիրիան արևելքում տարածվել է մինչև Արաքսես-Խաբուր գետը[26]: Անցնելով Խաբուրը՝ Կյուրոս Կրտսերի բանակն անցնում է Արաբիայի անապատներով[27՝ հասնելով Մասկաս գետի ափին գտնվող Կորսոտե քաղաքը[28]: Այստեղից բանակը հասնում է, ըստ էության, Բաբելոնիայի սահմանը՝ Պյուլե (բառացի «դարպաս») վայրը[29]: Եփրատի աջ ափին Քսենոփոնը հիշատակում է Քարմանդե՝ ներկայիս Հիթ խոշոր քաղաքը[30], այսինքն՝ Կյուրոս Կրտսերի բանակն արդեն Բաբելոնիայում էր:

Քսենոփոնի հետագա շարադրանքից պարզվում է, որ Սիտակե[31] և Օպիս քաղաքները մտնում էին Բաբելոնիայի մեջ, որի սատրապն էր Հռոպարասը[32]. վերջինիս այս պաշտոնում նախորդել էր Սիրիայի և Ասսյուրիայի սատրապ Բելեսյուսը[33]:

---

22 Տես **Հերոդոտոս**, I, 178–181; III, 155, 158 [**Herodotos**, I, 178–181; III, 155, 158]:

23 Անդ, I, 192; **Dandamaev M.**, Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations, p. 229. Բաբելոն քաղաքի ավերակները գտնվում են Բաղդադից 85 կմ դեպի հարավ (տես "A Commentary on Herodotus Books I–IV", ed. by **O. Murray, A. Moreno**, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 198): Բաբելոն քաղաքի նկարագրության վերլուծությունը մանրամասն տես **MacGinnis J.**, Herodotus' Description of Babylon, Bulletin of the Institute of Classical Studies, 1986, № 33, pp. 67–86.

24 Տես A Commentary on Herodotus Books I–IV, p. 199.

25 Տես **Հերոդոտոս**, I, 178–179, 189, 193 [**Herodotos**, I, 178–179, 189, 193]; **Արիանոս,** Ալեքսանդրի արշավանքը, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ **Արիանոս)**, Եր., 1987, էջ 248–249 [**Arianos**, Alek'sandri arshavanqy, «Alek'sandr Makedonac'i» (aysuhetev՝ **Arianos**), Yerevan, 1987, pp. 248–249]:

26 Այս մասին տես **Խորիկյան Հ.**, Սիրիան Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգում, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2015, N 1–12, էջ 9–24 [**Khorikyan H.**, Syrian Ak'emenyan Parskastani varchakan bazhanman hamakargum, «Handes amsoreay», Vienna–Yerevan, 2015, tiv 1–12, pp. 9–24]:

27 Հմմտ. **Herzfeld E.,** The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 306.

28 Տես **Xenophon**, Anabasis, with an English translation by **Carleton L. Brownson**, Books I–VII, Cambridge–Massachusetts–London, 1980, Loeb Classical Library, I, V, 1–4, p. 46.

29 Անդ, I, V, 5, էջ 48:

30 Անդ, I, V, 10, էջ 50:

31 Տես **Humbach H., Ziegler S.**, Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, pp. 28, 32.

32 Տես **Քսենոփոն**, Անաբասիս, էջ 48–49, 197 [**Xenophon**, Anabasis, pp. 48–49, 197]:

33 Տես **Stolper M. W.**, Bēlšunu the Satrap, pp. 391–392, 395; հմմտ. Ctesias' History of Persia: Tales of the Orient, translated with commentaries by **L. Llewellyn-Jones** and **J. Robson**, London, New York, 2010, pp. 133–135, 146. Մ. Ստոլպերը միաժամանակ ընդգծում է, որ Բաբելոնի կառավարչի պաշտոնը նույնական չէր Բաբելոնիայի սատրապի պաշտոնին (**Stolper M. W.**, Bēlšunu the Satrap, pp. 396–397; հմմտ. **Parpola S.**, Sacas, India, Gobryas, and the Median Royal Court: Xenophon's **Cyropaedia** through the Eyes of an Assyriologist, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by **G. B. Lanfranchi, M. Roaf** and **R. Rollin**ger, History of the Ancient Near East, Monograph series 5, Padova, 2003, pp. 345–349):

Օպիսից հյուսիս ընկած տարածքները Քսենոփոնը համարում է Մեդիա[34], ինչը, սակայն, աշխարհագրական բովանդակություն ունի, քանի որ վարչական առումով հույները գտնվում էին IX սատրապության տարածքում[35]: Հունական զորաբանակն անցնում է Կայնայ քաղաքով, հասնում է Մեծ Զաբ գետին՝ շարժվելով Տիգրիս գետի հոսանքն ի վեր: Մասպիլայից հյուսիս մինչև կարդուխների երկիրն ընկած տարածքը նույնպես կարելի է համարել այս սատրապության մասը: Մեջբերված տեղեկություններից կարելի է նաև ենթադրել, որ մ. թ. ա. V դարի վերջին նախկին IX սատրապության ենթաշրջան կազմող Ասորեստանը միացել էր Սիրիային կամ V սատրապությանը, իսկ Բաբելոնիան դարձել էր առանձին սատրապություն: Սակայն կարծում ենք, որ առավել հավանական է ենթադրել, որ Ասորեստանը շարունակում էր Բաբելոնիայի հետ մնալ մեկ սատրապություն: Ամենայն հավանականությամբ Հերոդոտոսի «մնացյալ Ասորեստան» կոչված մարզը հետագայում վերանվանվում է Արբելիտիս[36] (=Սագարտիա[37])՝ դառնալով առանձին սատրապություն[38]: Գավգամելայի ճակատամարտում բաբելոնացիները «արտաքսված»՝ վերաբնակեցված կարիացիների և սիտակենների հետ Բուպարի, իսկ Կոյլեսիրիայի և Միջագետքի սիրիացիները, այսինքն՝ ասորեստանցիները, Մազեյի հրամանատարության տակ էին[39], որը քիչ ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվեց Բաբելոնի սատրապ[40]: Ռուփոսը նույն ճակատամարտում բաբելոնացիներին և սիրիացիներին, հավանաբար՝ ասորեստանցիներին, հիշատակում է առանձին-առանձին[41], ինչը կրկին խոսում է այս մասին, որ նախկին IX սատրապությունն արդեն բաժանվել էր երկու սատրապությունների՝ Ասորեստանը միացվել էր Սիրիային, իսկ Բաբելոնիան առանձին սատրապություն էր: Վերջինիցս Ալեքսանդր Մակեդոնացին բաժանում է Սիտակենեն՝ դարձնելով սատրապություն[42]:

Հարկ է նշել նաև, որ հին հեղինակների համար որոշ տեղեկություններում Միջագետքը հենց Ասորեստանն է, իսկ Բաբելոնիան գտնվում էր Ասորեստանից

Նշենք, որ Բելշունու-Բելեսյուս անունով Բաբելոնի մի քանի կառավարիչներ են եղել, որոնցից մեկը հիշատակվում է Արտաքսերքսես Ա-ի ժամանակ (մ. թ. ա. 465-424): Վերջինիս օրոք Կտեսիասը որպես Բաբելոնիայի սատրապ հիշատակում է արքայի եղբայր Արտարիոսին (տես **Ctesias**՝ History of Persia, p. 189):

34 Տես **Քսենոփոն**, Անաբասիս, էջ 50 [**Xenophon**, Anabasis, p. 50]; **Kuhrt A**., The Assyrian Heartland in the Achaemenid Period, Dans les pas des Dix-Mille, éd. **P. Briant,** Pallas, 43, 1995, pp. 242-243; **Tuplin Ch**., Xenophon in Media, in: Continuity of Empire(?): Assyria, Media, Persia, ed. by G. **B. Lanfranchi, M. Roaf** and **R. Rollinger**, History of the Ancient Near East, Monograph series 5, Padova, 2003, pp. 358-361.

35 Հմմտ. **Խորիկյան Հ**., Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XXX, Եր., 2016, էջ 60 [**Khorikyan H**., Ak'emenyan Parskastani marakan satraput'yan taratsk'y ev sahmannery, «Merdzavor ev Mijin Arevelk'i erkrner ev zhoghovurdner», h. XXX, Yerevan, 2016, p. 60]: Միաժամանակ նշենք, որ «մնացյալ Ասորեստան» մարզը զուտ աշխարհագրական պատկերացումներով կարող էր համարվել մարական սատրապության ենթաշրջաններից մեկը, որի կառավարիչն էր Արբակասը:

36 Տես **Humbach H., Ziegler S**., Ptolemy Geography, book 6, pp. 28, 32**; Pliny**, Natural History, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, 41, p. 368.

37 Տես **Jacobs B**.,Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius'III, SS. 149, 151.

38 Տես **Diodori** Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. III, Lipsiae, 1826, XVIII, 39, p. 266**; Jacobs B**.,Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius'III, SS. 151-152.

39 Տես **Arrian**, Anabasis Alexandri, with an English translation by **E. Iliff Robson**, Vol. I, Books I-IV, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, III, 8, 5-6; 11, 4-5, pp. 246, 256.

40 Տես **Արիանոս**, էջ 107, 262, 267 [**Arianos**, p. 107, 262, 267]: **Ռուփոս**, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ **Ռուփոս)**, Եր., 1987, էջ 371, 375 [**Rup'os**, Alek'sandr Makedona'tsu patmut'yuny, «Alek'sandr Makedonac'i» (aysuhetev՝ **Rup'os**), Yerevan, 1987, p. 371, 375]: Պլուտարքոսի մոտ սատրապի անունն է Հարպալոս (տես **Plutarch's** Lives, with an English translation by **B. Perrin**, Vol. VII, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, Alexander, XXXV, p. 332), որը, հավանաբար, այլ պաշտոն է ունեցել:

41 Տես **Ռուփոս**, էջ 350-351 [**Rup'os**, p. 350-351]:

42 Անդ, էջ 375:

հարավ[43]: Ստրաբոնը Ատուրիան՝ Ասորեստանը, սահմանակից է համարում Արբելայի շրջանին, այն դեպքում, երբ վերջինս նույնպես Ասորեստանի բուն տարածքն է եղել: Մյուս կողմից Արբելան համարում է Բաբելոնիայի մասը[44]: Նման աշխարհագրական պատկերացումով Ստրաբոնը, կարծես թե, նկարագրում է Աքեմենյան Պարսկաստանի IX սատրապության տարածքը:

Բաբելոնիայի և հարևան երկրների սահմանների ճշգրտման համար կարևոր են Ստրաբոնի տեղեկությունները: Այսպես, անդրադառնալով բաբելոնացիներին՝ հույն պատմիչը գրում է, որ նրանց հետ հյուսիսում սահմանակցում են հայերը և մարերը մինչև Զագրոսի գետը և սրա շուրջն ապրող ցեղերը[45]: Նկատի ունենալով Ստրաբոնի այլ հաղորդումները[46]՝ կարող ենք եզրակացնել, որ ամասիացի աշխարհագետի համար Բաբելոնն ընդարձակ երկիր էր՝ ընդգրկող գրեթե ամբողջ Միջագետքը, որը սահմանակից է եղել և՛ Հայաստանին, և՛ Մարաստանին՝ վերջինիցս բաժանված լինելով Զագրոսով[47]:

Ինչ վերաբերում է հնում Սիտակենե կոչված Ապոլլոնիատիսին, ապա Ստրաբոնի հաղորդումներից մեկը Սիտակենեի մասին ունի հետևյալ բովանդակությունը. «Սիտակենեն ընդարձակ և բերրի վայր է՝ Բաբելոնի և Սուսիանայի միջև, այնպես որ ամբողջ ճանապարհը Բաբելոնից Սուսա մեկնողների համար անցնում է դեպի արևելք Սիտակենեի միջով»[48]: Մեկ այլ տեղեկության մեջ հեղինակը հայտնում է, որ Սուսիանային հարևան երկիրը Բաբելոնի մի մասն է, որը նախկինում կոչվել է Սիտակենե, իսկ հետո՝ Ապոլլոնիատիս, և երկու երկրներից վերև՝ հյուսիսից արևելք, ապրում են էլյումացիները և պարետակենները: Ընդ որում, պատմիչը հավելում է, որ պարետակեններն ապրում են ավելի մոտ ապոլլոնիատիսցիներին, էլյումացիները պատերազմում են այս երկու ժողովուրդների և սուսիացիների հետ, իսկ ուքսիացիները՝ էլյումացիների հետ[49]:

Ստրաբոնի կողմից Սիտակենեի նույնացումը Ապոլլոնիատիսին թույլ է տալիս ավելի հստակեցնել այդ երկրի տեղորոշումը, և այս հարցում կարևոր են Իսիդոր Քարակացու տեղեկությունները: Համաձայն նրա «Պարթևական կայանների»՝ Սելևկիայից հետո դեպի հյուսիս Ապոլլոնիատիս երկիրն է՝ հունական Արտեմիտա քաղաքով, որի միջով հոսում է Սիլլա՝ ներկայումս Դիալա գետը: Շարունակելով իր տեղեկությունները՝ Իսիդորը գրում է, որ Ապոլլոնիատիսից հետո Խալոնիտիս երկիրն է՝ Խալա հունական քաղաքով, ընդ որում, Զագրոս լեռը բաժանում է Խալոնիտիս երկիրը Մեդերի երկրից[50]: Հեղինակը նաև ցույց է տալիս, որ հարավարևմուտքում Մարաստանի սահմանը Կարինա երկիրն է, որի անունը պահպանվել է այժմյան Կերենդ բնակավայրի անվան մեջ[51]: Հաղորդումը ցույց է տալիս, որ

43 Տես **Արիանոս**, էջ 96, 267 [**Arianos**, p. 96, 267]:
44 Տես **Страбон**, География в 17 книгах (այսուհետև՝ **Страбон**), перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, с. 684–685 [**Strabon**, Geografiya v 17 knigakh (aysuhetev՝ Strabon), perevod, stat'ya i kommentarii G. Stratanovskogo, Leningrad, 1964, p. 684–685].
45 Տես **Страбон**, с. 686 [**Strabon**, p. 686].
46 Ստրաբոնը գրում է, որ հնում Ասորեստանի մայրաքաղաքը Բաբելոնն էր, և Ադիաբենը Բաբելոնի մի մասն էր (անդ, էջ 690–691):
47 Անդ, էջ 492:
48 Անդ, էջ 690: Մեկ այլ տեղում ևս Սուսան և Սիտակենեն հիշատակվում են միասին: Հեղինակը հիշատակում է նաև մեոտական սիտակեններ ցեղը (անդ, էջ 470, 686):
49 Անդ, էջ 679:
50 Տես **Դանիելյան Է.**, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», «Պատմաբանասիրական հանդես», 1971, N 4, էջ 173 [**Danielyan E.**, Isidor K'arakac'u «Partevakan kaiannery», «Patmabanasirakan handes», 1971, tiv 4, p. 173]: Տես նաև **Muller C.**, Geographi Graeci Minores, Vol. I, Parisiis, 1855, pp. 249–250. Խալոնիտիս երկիրը Զագրոսի լանջերին, Ապոլլոնիան էլ Խալոնիտիսից արևմուտք՝ Տիգրիսի արևելյան ափին, հիշատակում է Պոլիբիոսը (տե՛սThe General History of Polybius, Vol. II, by **Mr. J. Hampton**, London, 1809, p. 231, 235): Խալոնիտիսը նույնանում է Անանուն Ռավեննացու Խալոնիտոնին (տես Ravennatis Anonymi Cosmographia, ed. **M. Pinder** et **Parthey**, Berolini, 1860, II, 5, p. 51):
51 Տես **Դանիելյան Է.**, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173 [**Danielyan E.**, Isidor K'arakac'u «Partevakan kaiannery», p. 173]:

Սիտակենե-Ապոլլոնիատիսը և Խալոնիտիսը գտնվել են Դիալա գետի ավազանում, սակայն Ստրաբոնի և Իսիդորի տեղեկությունների համեմատությունը ցույց է տալիս, որ վերջինս Ապոլլոնիատիսը տեղադրում է Ստրաբոնի Սիտակենեից հյուսիս, հետևաբար Ապոլլոնիատիսը, նույնանալով հանդերձ Սիտակենեին, տարածվել է վերջինիս հյուսիսային հատվածում[52]: Ըստ էության, Սիտակենեն հնում ունեցել է ընդարձակ տարածություն, և պատահական չէ, որ Սիտակենե՝ որպես սատրապություն, հիշատակվում է Ռուփոսի կողմից, ընդ որում՝ դատելով պատմիչի տեղեկություններից, Սիտակենեն գտնվել է Բաբելոնի և Սուսայի միջև[53]: Պտղոմեոսը Սիտակենեի ընդարձակ տարածքը նկատի ունի, երբ նշում է, որ Սիտակենեն գտնվում էր Սուսիանայի հարևանությամբ, իսկ Ապոլլոնիատիսն էլ հիշատակում է Սիտակենեից հյուսիս[54]: Ի վերջո, Քսենոփոնի Սիտակե քաղաքը գտնվում էր Տիգրիսի աջափնյակում[55], և հնարավոր է, որ ուշ ժամանակներում քաղաքի բնակչության տեղաշարժի հետևանքով նրա անունն աստիճանաբար տարածվում է Տիգրիսից արևելք ընկած տարածքների վրա, որոնք սկսում են կոչվել Սիտակենե[56]:

Այդուհանդերձ, ապոլլոնիատիսցիների հարևանությամբ պարետակենների տեղադրությունը չի հաստատվում, քանի որ Ստրաբոնը գրում է, որ Պարսքին սահմակից է Պարետակենան և Կոսսեյան մինչև Կասպիական դռներ, իսկ Սուսիանային էլ սահմանակից է Էյումայիսը, վերջինիս էլ՝ Զագրոսի շրջանը և Մարաստանը[57]: Ստրաբոնը իր տեղեկություններից մեկում ևս գրում է, որ Զագրոսից հետո Բաբելոնից վերև էյումացիների և պարետակենների լեռնային երկիրն է, իսկ Մարաստանից վերև՝ կոսսեյների երկիրը[58]:

Բաբելոնիան և Ասորեստան-Աթուրիան բազմիցս հիշատակվում են պարսկական սեպագիր արձանագրություններում: Նշված երկրները կողք կողքի կամ առանձին-առանձին հիշատակվում են Բեհիսթունի և այլ արձանագրություններում[59]: Բաբելոնիան երկու անգամ մ. թ. ա. 522-521 թվականներին ապստամբում է Դարեհ Ա-ի դեմ՝ փորձելով անկախանալ[60]: Դարեհ Ա-ի դեմ ապստամբում է նաև Ասորեստանը[61]: Բեհիսթունի արձանագրության տեղեկություններից երևում է, որ Դարեհի Ա-ի դեմ ապստամբել էր գրեթե ամբողջ Միջագետքը:

Այսպիսով, բաբելոնական կամ IX սատրապությունն Աքեմենյան կայսրության ամենահարուստ նահանգն էր և տնտեսական կենտրոնը: IX սատրապությունը կազմված էր վարչական երկու ենթաշրջաններից՝ Բաբելոն քաղաքից և դեպի հյուսիս ընկած «մնացյալ Ասորեստանից»:

Հին աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ Աքեմենյան Պարսկաստանի

---

52 Անդ, էջ 178, ծնթ. 35: Սիտակենեն՝ Սուսիանեի և Քալոնիտիսը՝ Զագրոսի հարևանությամբ հիշատակում է նաև Պլինիոս Ավագը (տես **Pliny**, Natural History, VI, 114; 122; 131-132, pp. 424, 430, 436, 438):

53 Տես **Ռուփոս,** էջ 375 [**Rup'os**, ej 375]: Սիտակենեն Բաբելոնի և Սուսիանեի միջև հիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին (տես **Դիոդորոս Սիկիլիացի**, էջ 98 [**Diodoros Sikiliac'i**, p. 98]; **Diodori** Bibliotheca Historica, ed. **L. Dindorfius**, Vol. III, Lipsiae, 1826, XVII, 65, 110, pp. 167, 212): Քալոնիտիս երկրի կենտրոնը հավանաբար Դիոդորոս Սիկիլիացու հիշատակած Կոլոնոս քաղաքն է, որտեղով անցնում էր Մեդիա տանող երկու ճանապարհներից մեկը (տես **Դիոդորոս Սիկիլիացի**, էջ 127 [**Diodoros Sikiliac'i**, p. 127]):

54 Տես **Humbach H., Ziegler S**., Ptolemy Geography, book 6, pp. 28-29.Պտղոմեոսը հիշատակում է նաև Ապոլլոնիատիսի և Սիտակենեի կենտրոնները՝ Ապոլլոնիա և Սիտակե քաղաքները (անդ, էջ 32-33):

55 Տես **Քսենոփոն**, Անաբասիս, 48 [**Xenophon**, Anabasis, p. 48]: Հեկատեոսի հիշատակած Պարսքի Սիտակե քաղաքը վերագրվում է կամ Բաբելոնիային, կամ Մարաստանին (տես **Muller C**., Fragmenta Historicorum Graecorum, Vol. I, Parisiis, 1841, p. 12, fr. 184; **Herzfeld E.,** The Persian Empire, p. 10): Դատելով Արիանոսի տեղեկությունից՝ սիտակենները համարվել են բաբելոնացիների մի մասը (տես **Արիանոս**, էջ 97 [**Arianos**, p. 97]):

56 Տես **Jacobs B.**,Die Satrapienverwaltung im Perserreich zur Zeit Darius'III, S. 151.

57 Տես **Страбон**, с. 690 [**Strabon**, p. 690].

58 Անդ, էջ 492:

59 Տես **Kent R**., Old Persian, pp. 117, 136-137, 140-141, 143, 145, 151, 156.

60 Անդ, էջ 118, 126:

61 Անդ, էջ 121-122:

այս նահանգը հիմնականում ընդգրկում էր Ստորին Միջագետքը՝ Բաբելոնիայի մարզը, և հին Աշշուրի տարածքը: Ընդ որում, Ասորեստանի հյուսիսարևմտյան ընդարձակ մի հատվածը մտնում էր հայկական սատրապության կազմի մեջ:

Հովհաննես Գ. Խորիկյան – զբաղվում է հին և վաղ միջնադարյան Իրանի, Այսրկովկասի, Առաջավոր Ասիայի, Հայաստանի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, էթնիկական հիմնախնդիրների հետազոտությամբ: Հեղինակ է երեք մենագրությունների («Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ», Եր., 2010; «Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում» (պատմաաշխարհագրական ուսումասիրություն), Եր., 2014; Փոքր Ասիայի սատրապական բաժանումը մ. թ. ա. VI–IV դարերում, Եր., 2017) և ավելի քան 40 հոդվածների:

Summary

THE BABYLONIAN SATRAPY IN THE ADMINISTRATIVE SYSTEM OF ACHAEMENID PERSIA

Hovhannes G. Khorikyan

Key words – Herodotus, Xenophon, the city of Babylon, Babylonia, Darius I, Satrapy, politics, Assyria,data, Mesopotamia, «the rest of Assyria»,the BehistunInscription.

Ancient greek author Herodotus writes about the IX Satrapy that Babylon and the rest of Assyria rendered to Darius a thousand talents of silver and five hundred boys to be eunuchs.

The Babylonian or IX satrapy was the richest province and the economic center of Achaemenid Empire. The IX satrapy consisted of two subdistricts: the city of Babylon with its suburbs and «the rest of Assyria» toward the north. In other words, this province of Achaemenid Persia included the Lower Mesopotamia: the province of Babylon and the territory of ancient Assur. Moreover, the northwestern vast part of Assyria was within Armenian satrapy. The article concludes that IX satrapy was not a stable administrative unit and its borders were subject to change.

Many important and wrinkled issues on the administrative policy and historical geography of IX Satrapy were examined in the article, the elucidation of which is of great importance for the study of the history of Achaemenid Persia.

Резюме

ВАВИЛОНСКАЯ САТРАПИЯ В АДМИНИСТРАТИВНОЙ СИСТЕМЕ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

Оганес Г. Хорикян

Ключевые слова – Геродот, Ксенофонт, город Вавилон, Вавилония, Дарий I, сатрапия, политика, Ассирия, сведения, Месопотамия, «остальная Ассирия», Бехистунская надпись.

Древнегреческий автор Геродот писал про IX сатрапию, что от Вавилона и остальной Ассирии, составлявших девятый округ, поступало Дарию тысячу талантов серебра и пятьсот оскопленных мальчиков. Вавилонская или IX сатрапия Ахеменидской Персии была самой богатой провинцией и экономическим центром империи. IX сатрапия состояла из двух субрайонов: город Вавилон и его окрестности и находящаяся на севере «остальная Ассирия». Другими словами, эта провинция Ахеменидской Персии в основном включала в себя Нижнюю Месопотамию – Вавлиноскую область и территорию древнего Ашшура. Кроме того, обширная часть северо–западной Ассирии входила в состав армянской сатрапии. В статье сделан вывод о том, что IX сатрапия не являлась стабильной административной единицей и границы ее подвергались изменениям. В статье проанализировано множество сложных вопросов касающихся административной политики и исторической географии IX сатрапии, прояснение которых имеет важное значение для исследования истории Ахеменидской Персии.

CONTENT

EDITORIAL
WHO IS THE ARMENIAN? 3

CORNERSTONES
Davit R. Mosinyan
THE PROBLEM OF POSSIBILITY OF PHILOSOPHY OF HISTORY 10

Elena O. Etaryan
METAIZATION IN THE LITERATURE AND THE PROSPECTS OF ITS RESEARCH 18

HISTORY
Gegham M. Badalyan
THE NATIONAL IMAGE OF CENTRAL AND EASTERN PROVINCES OF TAYK IN THE END OF 16TH CENTURY
According to "Spacious List of Taxes of Gyurjistan Vilâyet" 40

THEORY OF HISTORY
Albert A. Stepanyan
WESTERNIZATION IN HELLENISTIC AND EARLY MEDIEVAL ARMENIA
History and historical writing (in English) 71

LITERARY CRITICISM
Albert A. Makaryan
Astghik V. Soghoyan
FOLLOWING THE TRACES OF RENDERINGS OF A FAMOUS TALE
Charles Perrault, Brothers Grimm, Hakob Paronyan 123

Marine D. Ghazaryan
THE SOCIAL–PSYCHOLOGICAL MANIFESTATIONS OF GENDER
In collection "The Humbles" by Hagop Oshagan 140

Khachik A. Harutyunyan
ARMENIAN LEXICOGRAPHY FROM THE SECOND HALF OF THE XVIII CENTURY AND THE COLOPHONS OF THE ARMENIAN MANUSCRIPTS
Newfound words in the colophons of the X–XII centuries 157

GEOPOLITICS
Narek A. Mkrtchyan
THE CHALLENGES OF TURKISM AND ISLAM IN KAZAKHSTAN 175

CULTURE
Ruben S. Angaladyan
THE ONE WHO BLESSED LONELINESS
On the occasion of the exhibition of Ara Shiraz 191

MEMORY
Ashot N. Hayruni
KAREN JEPPE'S MISSION OF SALVATION. A COMPREHENSIVE VIEW
Part one. The activities of the great humanist in Urfa 199

Ararat M. Hakobyan
ON THE QUESTION OF THE ASSESSMENT OF A. MIKOYAN AS A PARTY–STATE ACTOR 217

DISCUSSIONS
Ruslan A. Tsakanyan
THE VERSIONS OF KHORENATSI AND SEBEOS ON THE FALL OF ASSYRIA 230

Hovhannes G. Khorikyan
THE BABYLONIAN SATRAPY IN THE ADMINISTRATIVE SYSTEM OF ACHAEMENID PERSIA 240

THEORETICAL AND PRACTICAL – The Challenge of Statehood. Part II
Armen S. Asryan
INDIVIDUALITY OF ARAM MANUKYAN AS THE DRIVING FORCE OF HISTORY–MAKING 249

Part III
Aram S. Sayiyan
DERSIM DURING THE TURKISH–ARMENIAN WAR IN 1920
Lessons from the Kochgiri uprising 266

REVIEWS
Tigran S. Simyan – Zhenya Kalantaryan, Literary criticism as Practical Literary Studies. Textbook 278

ARCHIVE
Aram A. Andonian
RECORDS ABOUT THE HISTORY OF DEPORTATIONS AND MASSACRES
Massacres at Ras al–Ain
Publication, introduction and notes are prepared by Mihran A.Minassian 285

ANNEX
Vardan G. Devrikyan
THE UNQUENCHABLE LIGHT OF SAINT LAZARUS ISLAND
Dedicated to the 300th anniversary of the establishment of the Mekhitarist Congregation in Venice I (297)

ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ Ամսագիր (հատոր) 4 (60), հոկտեմբեր–դեկտեմբեր, 2017

СОДЕРЖАНИЕ

РЕДАКТОРСКАЯ СТАТЬЯ
КТО ТАКОЙ АРМЯНИН? 3

ОСНОВЫ
Давид Р. Мосинян
ПРОБЛЕМА ВОЗМОЖНОСТИ ФИЛОСОФИИ ИСТОРИИ 10

Елена О. Этарян
МЕТАИЗАЦИЯ В ЛИТЕРАТУРЕ И ПЕРСПЕКТИВЫ ЕЕ ИССЛЕДОВАНИЯ 18

ИСТОРИЯ
Гегам М. Бадалян
НАЦИОНАЛЬНЫЙ ОБЛИК ЦЕНТРАЛЬНЫХ И ВОСТОЧНЫХ ПРОВИНЦИЙ ТАЙКА В КОНЦЕ XVI ВЕКА
Согласно «Обширному списку налогов вилайета Гюрджистан» 40

ТЕОРИЯ ИСТОРИИ
Альберт А. Степанян
ВЕСТЕРНИЗАЦИЯ В ДРЕВНЕЙ И РАННЕСРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ
История и исторический текст (на английском языке) 71

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
Альберт А. Макарян
Астгик В. Согоян
ПО СЛЕДАМ ИЗЛОЖЕНИЯ ОДНОЙ ИЗВЕСТНОЙ СКАЗКИ
Шарль Перро, братья Гримм, Акоп Паронян 123

Марине Д. Казарян
ПРОЯВЛЕНИЯ СОЦИАЛЬНОЙ ПСИХОЛОГИИ ГЕНДЕРА
В сборнике Акопа Ошакана «Смиренные» 140

Хачик А. Арутюнян
ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ И АРМЯНСКАЯ ЛЕКСИКОГРАФИЯ СО ВТОРОЙ ПОЛОВИНЫ XVIII ВЕКА
Новые слова в колофонах X–XII веков 157

ГЕОПОЛИТИКА
Нарек А. Мкртчян
ВЫЗОВЫ ТЮРКИЗМА И ИСЛАМА В КАЗАХСТАНЕ

КУЛЬТУРА 175
Рубен С. Ангаладян
ТОТ, КТО БЛАГОСЛАВЛЯЛ ОДИНОЧЕСТВО
По случаю выставки Ара Шираза 191

ПАМЯТЬ
Ашот Н. Айруни
МИССИЯ СПАСЕНИЯ КАРЕН ЕППЕ. ВСЕСТОРОННИЙ ВЗГЛЯД
Часть первая. Деятельность великой гуманистки в Урфе 199

Арарат М. Акопян
ПО ВОПРОСУ ОЦЕНКИ А. МИКОЯНА КАК ПАРТИЙНО–ГОСУДАРСТВЕННОГО ДЕЯТЕЛЯ 217

ДИСКУССИИ
Руслан А. Цаканян
ВЕРСИИ ХОРЕНАЦИ И СЕБЕОСА О ПАДЕНИИ АССИРИИ 230

Оганнес Г. Хорикян
ВАВИЛОНСКАЯ САТРАПИЯ В АДМИНИСТРАТИВНОЙ СИСТЕМЕ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ 240

НАУЧНО–ПРАКТИЧЕСКИЙ – Вызов государственности. Часть II
Армен С. Асрян
ИНДИВИДУАЛЬОСТЬ АРАМА МАНУКЯНА КАК ДВИЖУЩИЙ ФАКТОР ИСТОРИИ 249

Часть III
Арам С. Саиян
ДЕРСИМ ВО ВРЕМЯ ТУРЕЦКО–АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920–ГО ГОДА
Уроки восстания Кочгири 266

РЕЦЕНЗИИ
Тигран С. Симян – Женя Калантарян, Литературная критика как практическое литературоведение.
Учебное пособие 278

АРХИВ
Арам А. Андонян
МАТЕРИАЛЫ ОБ ИСТОРИИ ДЕПОРТАЦИИ И МАССОВОЙ РЕЗНЕ
Резня в Рас–эль–Айн
Публикация, введение и примечания подготовлены Мигранoм А. Минасяном 285

ПРИЛОЖЕНИЕ
Вардан Г. Деврикян
НЕУГАСИМЫЙ СВЕТ ОСТРОВА СВЯТОГО ЛАЗАРЯ
Посвящается 300–летию установления конгрегации Мхитаристов в Венеции I (297)

«Վէմ» հանդէս ՍՊԸ
Վկայական՝ 03Ա075879
Տրված՝ 04.04.2007
Տնօրեն՝ Հայկազուն Ալվրցյան

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության և Գրականության
ինստիտուտների գիտական խորհուրդների երաշխավորությամբ:

«Վէմ» հանդեսում հրապարակվող հոդվածները պարտադիր կերպով
գրախոսվում են:

Տպաքանակ՝ 500 օրինակ
Երևան 2017
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչության տպարանում: